Գործնական ուղեցույց քաղաքացիական հասարակության համար

# ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

UNITED NATIONS
HUMAN RIGHTS
OFFICE OF THE HIGH COMMISSIONER

Գործնական ուղեցույց քաղաքացիական հասարակության համար

# ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Թարգմանությունը՝ Արամազդ Ղալամքարյանի

## Բովանդակություն


1. Այս ուղեցույցի մասին ..... 3
2. Քաղաքացիական հասարակության դերակատարներ
և քաղաքացիական հասարակության գործունեության տարածք ..... 5
2.1. Միավորված ազգերի կազմակերպության մարդու
իրավունքների համակարգի համառոտ նկարագրություն ..... 8
3. Պայմաններ ազատ և անկախ քաղաքացիական
հասարակության աշխատանքի համար ..... 11
3.1. Օժանդակող քաղաքական և հանրային միջավայր ..... 12
3.2. Բարենպաստ իրավական դաշտ ..... 13
3.3. Տեղեկությունների ազատ տարածում ..... 14
3.4. Երկարաժամկետ աջակցություն և ռեսուրսներ ..... 14
3.5. Երկխոսության և համագործակցության ընդհանուր տարածք ..... 15
4. Մարտահրավերները, որոնց բախվում են
քաղաքացիական հասարակության դերակատարները ..... 22
4.1. Օրենսդրական կամ նորմատիվային բնույթի միջոցառումներ, որոնք
խոչընդոտում են քաղաքացիական հասարակության աշխատանքը .. 23
4.2. Կամայական միջոցառումներ ..... 24
4.3. Օրենսդրական կարգավորման շրջանակից դուրս
ոտնձգություններ, ահաբեկումներ և ճնշամիջոցներ ..... 26
5. Ի՞նչ կարող եմ անել ես: ՄԱԿ-ին դիմելու գործընթացը ..... 33
6. Փաստաթղթերի շտեմարաններ ..... 45
7. Հետադարձ կապ ..... 47


*«Քաղաքացիական հասարակության դերակատարների վճռականությունն ու սկզբունքայնությունն ինձ, և հավանաբար նաև ձեզ, ներշնչում է խոնարհ ակնածանքի զգացողություն, մեծ և զորեղ պարտքի զգացում և տոգորում կամքով շարունակելու աշխատել հանուն յուրաքանչյուր մարդ էակի հավասար և անօտարելի արժանապատվության ու իրավունքների»:*

*Զեիդ Ռաադ ալ-Հուսեյն*
*Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների գերագույն հանձնակատար*
*Հոկտեմբեր, 2014 թ.*

## 1. Այս ուղեցույցի մասին

Արտահայտման, միավորումներ կազմելու և խաղաղ հավաքների ազատությունն ու հանրային քաղաքականությանը մասնակցելու իրավունքը մարդու իրավունքներ են, որ մարդկանց հնարավորություն են տալիս գաղափարներ փոխանցել, ձևավորել նոր գաղափարներ և միավորել ուժերը՝ հանուն իրենց իրավունքների իրացման: Այս հանրային ազատությունների իրացման միջոցով է, որ մենք հիմնավորված որոշումներ ենք կայացնում մեր տնտեսական և սոցիալական զարգացման վերաբերյալ: Այս իրավունքների միջոցով է, որ մենք կարող ենք մասնակցել քաղաքացիական գործունեությանը և կառուցել ժողովրդավարական հասարակություններ: Դրանց սահմանափակումն արգելակում է մեր հավաքական առաջընթացը:

Սա վեցերորդն է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնա-

կատարի գրասենյակի (ՄԻԳՀԳ)՝ քաղաքացիական հասարակության համար մարդու իրավունքների գործնական ուղեցույցների շարքում, և այն պետք է դիտարկել ՄԻԳՀԳ-ի ներկայիս թեմատիկ առաջնահերթություններից մեկի՝ «Ժողովրդավարական տարածքի ընդլայնման» համատեքստում:

Այս ուղեցույցն անդրադառնում է քաղաքացիական հասարակության դերակատարների (ՔՀԴ-ներ) աշխատանքի հետ կապված հարցերի: Ուղեցույցի սկզբում ներկայացվում են «քաղաքացիական հասարակություն» և «քաղաքացիական հասարակության գործունեության տարածք» եզրույթների աշխատանքային սահմանումները: Այնուհետև այն ներկայացնում է ազատ և անկախ քաղաքացիական հասարակության համար անհրաժեշտ պայմանների և միջավայրի, այդ թվում՝ արտահայտման, միավորումներ կազմելու և խաղաղ հավաքների ազատության և հանրային քաղաքականությանը մասնակցելու իրավունքի միջազգային իրավական համապատասխան ստանդարտների ընդհանուր նկարագրությունը:

Ուղեցույցը պարունակում է որոշ օրինակներ, թե ինչպես են կառավարությունները և ՔՀԴ-ները համագործակցել՝ ստեղծելու քաղաքացիական հասարակության գործունեության տարածք, որպեսզի վերջինս կարողանա իրականացնել բոլորի համար մարդու բոլոր իրավունքներից (քաղաքացիական, մշակութային, տնտեսական, քաղաքական և սոցիալական) օգտվելու հնարավորության առաջմղման իր աշխատանքը: Հստակեցվում են քաղաքացիական հասարակության գործունեությունը սահմանափակող և խոչընդոտող հանգամանքները, այդ թվում՝ ՔՀԴ-ների նկատմամբ ոտնձգությունները, ահաբեկումները և բռնաճնշումների կիրառումը:

Ուղեցույցը նպատակուղղված է առաջին հերթին այն ՔՀԴ-ներին օգնելուն, որոնք դեռևս ծանոթ չեն ՄԱԿ-ի մարդու իրավունքների համակարգին: Մշակման ընթացքում այն հարստացել է զանազան ՔՀԴ-ների տեսակետներով և խորհուրդներով:

# 2. Քաղաքացիական հասարակության դերակատարներ և քաղաքացիական հասարակության գործունեության տարածք

*«Երբ առաջնորդներն ականջալուր չեն լինում իրենց ժողովրդին, նրանք ստիպված են լինում լսելու ժողովրդին, երբ այն փողոցներում է, հրապարակներում կամ, ինչպես չափազանց հաճախ ենք ականատես լինում, մարտադաշտում: Ավելի լավ ուղի կա: Ավելի՛ շատ մասնակցություն: Ավելի՛ շատ ժողովրդավարություն: Ավելի՛ շատ ներգրավվածություն և բացություն: Դա նշանակում է առավելագույն տարածք քաղաքացիական հասարակության գործունեության համար»:*

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի-մունի
դիտարկումները քաղաքացիական հասարակության
աջակցմանն ուղղված բարձրաստիճան միջոցառման
ժամանակ, 2013 թ. սեպտեմբերի 23

Այս ուղեցույցը ՔՀԴ-ներին սահմանում է որպես անհատներ և խմբեր, որոնք կամավոր ներգրավվում են հանրային մասնակցության ձևերում և գործում ՄԱԿ-ի նպատակների հետ համադրելի ընդհանուր շահերի, նպատակների կամ արժեքների շուրջ. խաղաղության և անվտանգության պահպանում և մարդու իրավունքների առաջմղում ու հարգանք դրանց նկատմամբ:

Մեր կյանքը բարելավելուն ուղղված ՄԱԿ-ի աշխատանքը հիմնված է մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի վրա: Եվ, լինի բացահայտ, թե ոչ բացահայտ, իրենց աշխատանքի բովանդակության թե ուղղվածության շնորհիվ, ՔՀԴ-ները, ինչպես սահմանվեց վերը, ձգտում են խթանել և պաշտպանել մարդու իրավունքները:

ՔՀԴ-ները խթանում են իրավունքների վերաբերյալ իրազեկությունը,

համայնքներին օգնում մտահոգությունները բարձրաձայնելու հարցում, ռազմավարություններ են ձևավորում, ներգործում քաղաքականության և օրենքների վրա և պահանջում հաշվետվականություն: ՔՀԴ-ները նաև հավաքում և ուղղորդում են համայնքների տեսակետները, որպեսզի հանրային քաղաքականության վերաբերյալ որոշումներն ավելի լիարժեքորեն հիմնավորված լինեն: Միաժամանակ, ՔՀԴ-ները ծառայություններ են մատուցում վտանգի մեջ գտնվողներին և մի շարք ճակատներում խոցելիություն ունեցողներին:

**«Յուրաքանչյուրն ունի իրավունք, անհատապես կամ այլոց հետ միասին,** ազգային և միջազգային մակարդակում խթանելու մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները և պայքարելու հանուն դրանց պաշտպանության և իրացման»: (Հոդված 1, շեշտադրումներն ավելացված են հեղինակի կողմից)

Հռչակագիր անհատների, խմբերի և հասարակության մարմինների իրավունքի և պարտականության վերաբերյալ՝ խթանելու և պաշտպանելու համընդհանուր կերպով ընդունված մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները (Ընդհանուր վեհաժողովի թիվ 53/144 բանաձև), որը սովորաբար անվանվում է Իրավապաշտպանների մասին հռչակագիր:

## Օրինակ, քաղաքացիական հասարակության դերակատարների թվում են՝[1]

- իրավապաշտպաններ, այդ թվում՝ առցանց ակտիվիստները.
- իրավապաշտպան կազմակերպություններ (ՀԿ-ներ, միավորումներ, տուժածների աջակցության խմբեր).
- դաշինքներ և ցանցեր (օրինակ՝ կանանց իրավունքների, երեխաների իրավունքների կամ բնապահպանական հարցերի, հողային իրավունքի, ԼԳԲՏ-ների և այլն).

[1] *Ինչպես աշխատել Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների ծրագրի հետ. ձեռնարկ քաղաքացիական հասարակության համար, ՄԻԳՀԳ, 2008 թ., էջ. vii:*

- հաշմանդամություն ունեցող անձինք և նրանց ներկայացուցիչ կազմակերպություններ.
- համայնքահեն խմբեր (տեղաբնիկ ժողովուրդներ, փոքրամասնություններ, գյուղական համայնքներ).
- հավատացյալ անձանց խմբեր (եկեղեցիներ, կրոնական խմբեր).
- միություններ (արհեստակցական միություններ, ինչպես նաև մասնագիտական միություններ, օրինակ՝ լրագրողների միություններ, դատավորների, իրավաբանների ու փաստաբանների միություններ, հաշտարարների միություններ, ուսանողական միություններ).
- սոցիալական շարժումներ (խաղաղության շարժումներ, ուսանողական շարժումներ, հանուն ժողովրդավարության շարժումներ).
- մարդու իրավունքների իրացմանն ուղղակիորեն նպաստող մասնագետներ (օրինակ՝ մարդասիրական ոլորտի աշխատողներ, իրավաբաններ, բժիշկներ և բուժաշխատողներ).
- մարդու իրավունքների խախտումներից տուժածների հարազատներ և միավորումներ.
- պետական հաստատություններ, որոնք իրականացնում են մարդու իրավունքների առաջնմանն ուղղված գործունեություն (դպրոցներ, համալսարաններ, հետազոտական մարմիններ):

Քաղաքացիական հասարակության դերակատարներն ակտիվ են հասարակության համար կարևոր այնպիսի հարցերի կարգավորման ուղղությամբ ջանքեր գործադրելու հարցում, ինչպիսիք են.

- աղքատության, կոռուպցիայի և տնտեսական անհավասարության դեմ պայքար.
- մարդասիրական ճգնաժամերին, այդ թվում զինված հակամարտություններին արձագանքում.
- իրավունքի գերակայության և հաշվետվականության խթանում.
- հանրային ազատությունների խթանում.
- պետական բյուջեների թափանցիկության ապահովման ուղղությամբ գործունեություն.
- շրջակա միջավայրի պաշտպանություն.
- զարգացման իրավունքի իրացում.
- փոքրամասնություններին և վտանգի ենթակա այլ խմբերի պատկանող անձանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնում.

- խտրականության ցանկացած եղանակի դեմ պայքար.
- աջակցություն հանցավորության կանխարգելման ջանքերին.
- կորպորատիվ սոցիալական պատասխանատվության և հաշվետվականության խթանում.
- մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքար.
- կանանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնում.
- ատելություն քարոզող հռետորաբանության դեմ պայքար.
- երիտասարդների իրավունքների և հնարավորությունների ընդլայնում.
- սոցիալական արդարության և սպառողների պաշտպանության խթանում.
- սոցիալական ծառայությունների մատուցում:

ՔՀԴ-ները գործում են բոլոր մակարդակներում՝ տեղական, ազգային, տարածաշրջանային և միջազգային:

**Քաղաքացիական հասարակության գործունեության տարածքն** այն տեղն է, որ զբաղեցնում է քաղաքացիական հասարակությունն ամբողջ հասարակության մեջ. այն միջավայրը և շրջանակը, որում գործում է քաղաքացիական հասարակությունը, և փոխհարաբերությունները քաղաքացիական հասարակության դերակատարների, պետության, մասնավոր հատվածի ու լայն հանրության միջև:

## 2.1. Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների համակարգի համառոտ նկարագրություն

Խաղաղության և անվտանգության ապահովման և աշխարհով մեկ զարգացման իրականացման ուղղությամբ աշխատելուց բացի, բոլոր մարդկանց համար մարդու բոլոր իրավունքների խթանումն ու պաշտպանությունը ՄԱԿ-ի երեք հիմնասյուներից մեկն է: Սա սահմանված է ՄԱԿ-ի կանոնադրությամբ և մարդու իրավունքների միջազգային ստանդարտներով (իրավունքով):

ՄԱԿ-ը պայքարում է հանուն մարդու իրավունքների խթանման և պաշտպանության երեք հիմնական ուղիով.

1. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակը (ՄԻԳՀԳ) ՄԱԿ-ի համակարգի մարդու իրավունքների խթանմամբ ու պաշտպանությամբ զբաղվող առաջատար կազմակերպությունն է: Այն սերտորեն համագործակցում է ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալությունների, հիմնադրամների և ծրագրերի հետ (օրինակ՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության, ՄԱԿ-ի փախստականների հարցերով գործակալության, ՅՈՒՆԻՍԵՖ-ի, Աշխատանքի միջազգային կազմակերպության, ՅՈՒՆԵՍԿՕ-ի և այլն՝ առավելագույնի հասցնելու մարդու իրավունքների ասպարեզում աշխատանքի ազդեցությունը:

2. Մարդու իրավունքների միջազգային պայմանագրերով (դաշնագրեր և կոնվենցիաներ) ստեղծվում են անկախ փորձագետների հանձնախմբեր կամ պայմանագրային մարմիններ՝ կանոնավոր և պարբերաբար դիտարկելու մարդու իրավունքների ոլորտում պարտականությունների իրականացումը երկրների կողմից:

3. Միջկառավարական մարմինները կամ ժողովները՝ կազմված ՄԱԿ-ի անդամ պետություններից, ստեղծվում են՝ քննարկելու մարդու իրավունքների հետ կապված հարցեր և իրավիճակներ: Այս նպատակին ծառայող գլխավոր միջկառավարական մարմինը Մարդու իրավունքների խորհուրդն է, որին իր աշխատանքում, այլոց թվում, աջակցում են անկախ փորձագետները (Հատուկ ընթացակարգեր), Համընդհանուր պարբերական դիտարկում (ՀՊԴ) կոչվող մեխանիզմը:

Վերոնշյալ երեք տարրերն անկախ են, սակայն՝ փոխլրացնող: Այս մանդատների և մեխանիզմների մանրամասն բացատրությունները կարելի է գտնել այստեղ՝ «Ինչպես աշխատել Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների ծրագրի հետ. ձեռնարկ քաղաքացիական հասարակության համար» [Working with the United Nations Human Rights Programme: A Handbook for Civil Society] (տես Բաժին 6՝ «Ռեսուրսներ»): Ձեռնարկը հասանելի է ՄԱԿ-ի պաշտոնական 6 լեզուներով

և Թվային հասանելի տեղեկատվական համակարգի (DAISY) «CD Rom» ձևաչափով (ֆրանսերեն և անգլերեն՝ տեսողական հաշմանդամություն և տպագիր նյութը կարդալու դժվարություն ունեցող անձանց համար:

ՄԱԿ-ի մարդու իրավունքների համակարգի գործունեությունը հենվում է ՔՀԴ-ների մասնակցության վրա: Միջազգային մակարդակում քաղաքացիական հասարակությունը մասնակցում է մարդու իրավունքների հարցերի և խախտումների վերաբերյալ փորձագիտական գնահատմանը, իրազեկության բարձրացմանը և մոնիթորինգին ու զեկույցների ներկայացմանը: ՔՀԴ-ներն օգնում են ձևավորել մարդու իրավունքների նոր չափանիշներ, մեխանիզմներ և հաստատություններ, մարդու իրավունքների հարցերի լուծման համար հավաքագրել ռեսուրսներ և խթանել հանրային աջակցությունը:

## ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի նախաձեռնությունները քաղաքացիական հասարակության առնչությամբ

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդն ընդունել է քաղաքացիական հասարակության համար հատուկ կարևորություն ունեցող մի շարք բանաձևեր, մասնավորապես՝ արտահայտման ազատության, միավորումներ կազմելու և խաղաղ հավաքների ազատության, սպառնալիքների, բռնաճնշումների ու իրավապաշտպանների վերաբերյալ: 2013 և 2014 թվականներին այն ընդունել է թիվ 27/31 և թիվ 24/21 բանաձևերը՝ քաղաքացիական հասարակության գործունեության տարածքի մասին՝ ճանաչելով «քաղաքացիական հասարակության ակտիվ ներգրավվածության վճռորոշ նշանակությունը բոլոր մակարդակներում, պետական կառավարման և բարեխիղճ կառավարման խթանման գործընթացներում, այդ թվում՝ բոլոր մակարդակներում թափանցիկության և հաշվետվականության միջոցով, ինչը խաղաղ, բարգավաճ և ժողովրդավար հասարակությունների կառուցման պարտադիր պայման է»:

# 3. Պայմաններ ազատ և անկախ քաղաքացիական հասարակության աշխատանքի համար

*«Ազատ և անկախ քաղաքացիական հասարակությունն առողջ, պատասխանատու կառավարման հիմքն է տեղական, ազգային և համաշխարհային մակարդակներում»:*

Գլխավոր քարտուղար Բան Կի-մուն, տեսաուղերձ
Մարդու իրավունքների խորհրդի քսանհինգերորդ
նստաշրջանին, մարտ, 2014թ.

Պետությունների միջազգային իրավական պարտավորությունները նրանցից պահանջում են ստեղծել տնտեսական, քաղաքական, սոցիալական, մշակութային, իրավական պայմաններ, որոնք ակտիվորեն նպաստում են մարդկանց ունակությանը և կարողությանը՝ անհատապես կամ ուրիշների հետ միավորված ներգրավվելու քաղաքացիական գործունեության մեջ:

Մարդու իրավունքների սկզբունքները, որոնք ձևավորում են պետական իշխանության մարմինների և քաղաքացիական հասարակության դերակատարների փոխհարաբերությունները, հետևյալն են.

- **մասնակցություն.** Ճանաչվում է քաղաքացիական հասարակության դերը հասարակության մեջ, և քաղաքացիական հասարակության դերակատարներն ազատ են գործելու անկախ ու առաջ մղելու պետական իշխանությունների դիրքորոշումներից տարբերվող դիրքորոշումներ.
- **խտրականության անթույլատրելիություն.** քաղաքացիական հասարակության բոլոր դերակատարները հրավիրվում են և հնարավորություն են ստանում մասնակցելու հանրային կյանքին՝ առանց որևէ տեսակի խտրականության.
- **արժանապատվություն.** պետական իշխանությունները և քաղաքացիական հասարակության դերակատարներն ունեն ընդհանուր նպատակ՝ բարելավել մարդկանց կյանքը տարբեր դերեր կատարելու միջոցով: Այս փոխհարաբերության համար վճռորոշ նշանակություն ունի փոխադարձ հարգանքը.

- **թափանցիկություն ու հաշվետվականություն.** ի շահ հանրության գործելը պահանջում է, որ պետական պաշտոնյաները լինեն բաց, պատասխանատու, հստակ, թափանցիկ և հաշվետու: Այն նաև պահանջում է, որ ՔՀԴ-ները նույնպես գործեն թափանցիկ և հաշվետու լինեն միմյանց և հանրության նկատմամբ:

Առաջավոր փորձի հիմքում ընկած առանցքային պայմանները.[2]

## 3.1. Օժանդակող քաղաքական և հանրային միջավայր. քաղաքական և հանրային միջավայր, որն արժևորում և խրախուսում է քաղաքացիական մասնակցությունը:

Գործնականում հաստատությունները և պետական պաշտոնյաները քաղաքացիական հասարակության հետ իրենց կանոնավոր փոխգործունեության ընթացքում ականջալուր և արձագանքող են:

**Թունիս** – Քաղաքացիական հասարակությունը հիմնարար դեր է խաղացել նոր Թունիսի կառուցման գործում՝ մասնակցելով մարդու իրավունքների և ժողովրդավարության համար էական նշանակություն ունեցող նոր օրենքների և քաղաքականությունների մշակմանը: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ խորհրդակցություններ անցկացրեցին ժողովրդավարական հասարակությանն անցման առաջին նախաձեռնությունների, մասնավորապես՝ խղճի բանտարկյալների համար ընդհանուր համաներման և չորս միջազգային պայմանագրերին (Բռնությամբ անհետացած բոլոր անձանց պաշտպանության մասին կոնվենցիա, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային կոնվենցիայի Կամընտիր արձանագրություն, Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ

[2] *Հատուկ զեկուցողի զեկույցը իրավապաշտպանների դրության վերաբերյալ, իրավապաշտպանների համար անվտանգ և բարենպաստ միջավայրի տարրերը, A/HRC/25/55.*

պատժի դեմ կոնվենցիայի Կամընտիր արձանագրություն և Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտ) միանալու վերաբերյալ: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները մասնակցեցին հիմնական ժողովրդավարական հաստատությունների ձևավորմանը, ինչի արդյունքում ուժի մեջ մտավ նոր ընտրական օրենսգիրքը, և ընդունվեց միավորումների ազատության մասին նոր օրենքը, որը ներառում էր դրույթ հասարակական կազմակերպությունների պետական, ինչպես նաև արտասահմանից ֆինանսավորման մասին: 2011 թ. սեպտեմբերին նոր օրենքի ընդունումից հետո Թունիսում ստեղծվեց մի քանի հազար միավորում: Քաղաքացիական հասարակության դերը հիմնարար էր 2011 թ. ընտրություններում՝ Թունիսի առաջին ժողովրդավարական և թափանցիկ ընտրություններում: Առաջին անգամ քաղաքացիական հասարակության ավելի քան 10 հազար ակտիվիստներ հավաքագրվեցին՝ միջազգային հանրության աջակցությամբ դիտարկելու Սահմանադիր ժողովի ընտրությունները: Քաղաքացիական հասարակությունը, մասնավորապես կանանց կազմակերպությունները, հանդես էին գալիս հօգուտ Սահմանադրության նախագծում կանանց և տղամարդկանց միջև լիակատար հավասարության դրույթի ընդգրկման (Սահմանադրությունը Սահմանադիր ժողովի ճնշող մեծամասնության կողմից ընդունվեց 2014 թ. հունվարին):

Մարդու իրավունքների խորհրդի՝ քաղաքացիական հասարակության գործունեության տարածքի խթանման և պաշտպանության կարևորության վերաբերյալ փորձագիտական քննարկման ամփոփագիր, A/HRC/27/33:

**3.2. Բարենպաստ իրավական դաշտ.** օրենսդրությունը, վարչական կանոններն ու պրակտիկան համահունչ են միջազգային չափանիշներին և երաշխավորում են քաղաքացիական հասարակության գործունեությունը: Քաղաքացիական հասարակության դերակատարների համար արդարադատության հասանելիությունը, մարդու իրավունքների անկախ և արդյունավետ հաստատությունները և մարդու իրավունքների միջազգային մեխանիզմների հասանելիությունն այս շրջանակի բաղկացուցիչ մասն են:

Ողջամիտ օրենքներն ու քաղաքականությունները չափազանց կարևոր են, սակայն պատշաճ չիրականացվելու դեպքում կմնան անարդյունավետ:

**Սլովենիայում** միավորումներ կազմելու ազատությունը պաշտպանում է բոլոր միավորումները, այդ թվում՝ չգրանցված, և ապահովում, որ չգրանցված միավորումներում ներգրավված անհատները ազատ լինեն՝ իրականացնելու ցանկացած գործունեություն, այդ թվում անցկացնել խաղաղ հավաքներ և մասնակցել դրանց:

ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի զեկույցը խաղաղ հավաքների և միավորումներ կազմելու ազատության վերաբերյալ, A/HRC/20/27

**Լիբանանում և Մարոկկոյում** օրենսդրությունը քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից ներպետական և արտասահմանյան ֆինանսավորում ստանալու համար չի պահանջում իշխանության մարմինների հաստատումը:

ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի զեկույցը խաղաղ հավաքների և միավորումներ կազմելու ազատության վերաբերյալ, A/HRC/20/27

**3.3. Տեղեկությունների ազատ տարածում.** գաղափարների, տվյալների, զեկույցների, նախաձեռնությունների և որոշումների ազատ հասանելիություն՝ ՔՀԴ-ներին հարցերի վերաբերյալ իրազեկ դառնալու, մտահոգությունները շրջանառելու, կառուցողական եղանակով ներգրավվելու և լուծումներին մասնակցելու հնարավորություն տալու նպատակով:

**3.4. Երկարաժամկետ աջակցություն և ռեսուրսներ.** միջոցառումներ՝ ուղղված մեկուսացված խմբերի կարողությունների ստեղծմանը, և բոլոր ՔՀԴ-ների համար ռեսուրսների, հավաքների վայրերի ու տեխնոլոգիայի հասանելիության ապահովմանը:

**Խորվաթիայում** կառավարությունն ընդունել է Առաջավոր փորձի, միավորումների ծրագրերի և նախագծերի համար դրամաշնորհների տրամադրման ստանդարտների և չափորոշիչների մասին օրենսգիրքը, որը պետական իշխանության բոլոր մակարդակների մարմինների համար սահմանում է պետական դրամաշնորհների բաշխման թափանցիկ, հիմնական կանոններ և ընթացակարգեր:

Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն, Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների պետական ֆինանսավորում. Եվրոպական միության և Արևմտյան Բալկանների առաջավոր փորձը, 2011 թվական

## 3.5. Երկխոսության և համագործակցության ընդհանուր տարածք.

ապահովել քաղաքացիական հասարակության տեղը որոշումների կայացման գործընթացում:

**Մալդիվյան կղզիներում** կառավարությունը 2014 թ.-ին աջակցություն ցուցաբերեց կանանց իրավունքների պաշտպանների հնգօրյա ֆորումին, որի նպատակն էր տարածաշրջանային ՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների հետ միասին փոխանակել և քննարկել մահմեդական կրոնի շրջանակում գենդերային հավասարության իրացման տարածաշրջանային փորձը:

**Մեքսիկայում** իրավապաշտպանների և լրագրողների պաշտպանության մասին օրենքը ազգային մեխանիզմներ է ապահովում՝ հաղթահարելու այն սպառնալիքները, որոնց բախվում են իրավապաշտպաններն ու լրագրողները: Օրենքի նախագիծը կազմվել է քաղաքացիական հասարակության դերակատարների և Կոնգրեսի մասնակցությամբ, իսկ գործընթացին աջակցել են միջազգային ՀԿ-ներ ու կազմակերպություններ և ՄԻԳՀԳ Մեքսիկայի ներկայացուցչությունը:

**Նեպալում** 2010 թ.-ին քաղաքացիական հասարակության, Դալիթների հարցերով ազգային հանձնաժողովի և ՄԻԳՀԳ Նե-

պալի գրասենյակի մասնակցությամբ կազմվեց Կաստայական խտրականության և անձեռնմխելիության մասին օրենքի նախագիծը: Օրենքն ընդունվեց 2011 թ. մայիսին:

**Նոր Զելանդիայում** 2011 թ.-ին Հաշմանդամություն ունեցող անձանց ասոցիացիայի մասնակցությամբ մշակվեց Հաշմանդամության օրենքի նախագիծը:

ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի զեկույցը խաղաղ հավաքների և միավորումներ կազմելու ազատության վերաբերյալ A/HRC/20/27

**Վանուատուում** 2013 թ.-ին կառավարությունը կազմեց Համընդհանուր պարբերական դիտարկման կոմիտե, որի փոխնախագահը ներկայացվեց Վանուատուի ոչ կառավարական կազմակերպությունների ասոցիացիայի կողմից: Ի լրումն, քաղաքացիական հասարակությունը ներկայացված է Մարդու իրավունքների ազգային կոմիտեում՝ մարմին, որը լիազորված է համակարգել մարդու իրավունքների ասպարեզում Վանուատուի հաշվետվությունների ներկայացման պարտավորությունների իրականացման գործընթացը և մարդու իրավունքների հաստատության ստեղծման աշխատանքները: 2013 թ.-ին հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատող կազմակերպությունների հետ լայնածավալ խորհրդակցություններ անցկացվեցին Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեին զեկույցի նախագծի մշակման վերաբերյալ:

## Միջազգային իրավական ստանդարտներ, որոնք վերաբերում են քաղաքացիական հասարակության աշխատանքին

Քաղաքացիական հասարակության աշխատանքի անվտանգ և բարենպաստ միջավայրը պետք է ամրապնդվի ազգային օրենսդրական հաստատուն դաշտով՝ հիմնված մարդու իրավունքների միջազգային ստանդարտների վրա:

Արտահայտման, միավորումներ կազմելու, խաղաղ հավաքների ազատությունները և պետական գործերի վարմանը մասնակցելու

իրավունքը իրավունքներ են, որոնք մարդկանց հնարավորություն են տալիս համախմբել ուժերը հանուն դրական փոփոխությունների: Յուրաքանչյուր ոք, անհատապես կամ այլոց հետ համատեղ, պետք է օգտվի այս իրավունքներից: Դրանք քաղաքացիական գործունեության հիմնաքարերն են:

Մարդու իրավունքների ամենաառանցքային միջազգային փաստաթղթերը ներառում են դրույթներ, որոնք ուղղակիորեն առնչվում են հանրային ազատությունների պաշտպանությանը և բոլորն էլ հղում են կատարում խտրականության բացառման սկզբունքին.

- Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (հոդվածներ 19, 20, 21).
- «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը նախատեսում է կարծիքի և արտահայտման ազատության, խաղաղ հավաքների և միավորումներ կազմելու, և հանրային կյանքին մասնակցելու իրավունքներ (հոդվածներ 19, 21, 22, 25).
- «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը նախատեսում է արհեստակցական միություններ կազմելու կամ դրանց անդամակցելու, ինչպես նաև մշակութային կյանքին մասնակցելու իրավունքներ (հոդվածներ 8, 15).
- «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիան նախատեսում է կանանց իրավունքը՝ մասնակցելու քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին (հոդված 3).
- «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիան արգելում է խտրականությունը՝ կապված արտահայտման, հավաքների և միավորումներ կազմելու ու պետական գործերին մասնակցելու իրավունքների հետ (հոդված 5).
- «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան նախատեսում է արտահայտման, միավորումներ կազմելու և խաղաղ հավաքների ազատություն (հոդվածներ 13, 15).
- «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին»

կոնվենցիան երաշխավորում է կարծիքի և արտահայտման ազատության իրավունքները, և տեղեկությունների հասանելիության, քաղաքական ու հանրային, ինչպես նաև մշակութային կյանքին մասնակցության իրավունքները (հոդվածներ 31, 29, 30).

- «Բռնությամբ անհետացած բոլոր անձանց պաշտպանության մասին» կոնվենցիան նախատեսում է այն կազմակերպությունների և միավորումների ստեղծման և դրանց աշխատանքներում ազատ մասնակցելու իրավունքը, որոնք զբաղվում են բռնությամբ անհետացումների հանգամանքների ու անհետացած անձանց ճակատագրի վերաբերյալ ինչ-որ բան պարզելուն աջակցմամբ ու բռնությամբ անհետացման տուժողներին օգնության տրամադրմամբ (հոդված 24), և՝
- «Բոլոր աշխատող միգրանտների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասինե միջազգային կոնվենցիան նախատեսում է միավորումներ կազմելու ազատություն (հոդված 26):

Տեսակետների արտահայտման, միավորումներ կազմելու և խաղաղ հավաքների ազատությունները և պետական գործերին մասնակցելու իրավունքը ծառայում են որպես միջոց բազմաթիվ այլ քաղաքացիական, մշակութային, տնտեսական, քաղաքական և սոցիալական իրավունքների իրացման համար: Դրանք ընդլայնում են կանանց, տղամարդկանց և երեխաների իրավունքները՝ ներգրավվելու սոցիալ-հասարակական փոփոխություններ հարուցելուն ուղղված գործունեության մեջ:

**Տեսակետների արտահայտման ազատություն:** Արտահայտվելու ազատությունը ներառում է ցանկացած տեսակի տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու իրավունքը: Դրանք ներառում են քաղաքական և կրոնական բնույթի ելույթներն ու գաղափարները, պետական գործերի և մարդու իրավունքների հարցերի քննարկումները, ինչպես նաև մշակութային և գեղարվեստական արտահայտությունները: Սահմանումը ներառում է նաև արտահայտման այնպիսի դրսևորումները, որոնք կարող են համարվել խորապես վիրավորական, բացառությամբ որոշ սահմանափակումների (օր.՝ տես Ռաբաթի գործողությունների ծրագիրը ազգային, ռասայական կամ

կրոնական այնպիսի ատելության քարոզչության արգելման մասին, որը կարող է հարուցել խտրականություն, թշնամանք կամ բռնություն. հոկտեմբերի 5, 2012 թ.): Արտահայտման բոլոր եղանակները և կարծիքների տարածման միջոցները պաշտպանված են. բանավոր, գրավոր և նշանների լեզուն ու ոչ բառային արտահայտչամիջոցները, ինչպիսիք են պատկերները և արվեստի առարկաները: Տեսակետների արտահայտումը կարող է դրսևորվել գրքերի, թերթերի, պամֆլետների, ցուցապաստառների, ծաղրանկարների, վահանակների, հագուստի և իրավական բնույթի հայտարարությունների միջոցով: Այն ներառում է արտահայտման տեսաձայնային, ինչպես նաև էլեկտրոնային ու համացանցային եղանակները:

**Միավորումներիազատություն:** Միավորումնշանակումէանհատների ցանկացած խումբ կամ միավոր, որը հավաքականորեն իրացնում, արտահայտում, խթանում, հետամուտ է լինում կամ պաշտպանում է ընդհանուր շահեր: Միավորումների ազատության օրինակներից է քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, ակումբներին, կոոպերատիվներին, ՀԿ-ներին, կրոնական միավորումներին, քաղաքական կուսակցություններին, արհեստակցական միություններին, հիմնադրամներին կամ առցանց միավորումներին անդամակցելը կամ մասնակցելը կամ դրանց գործունեությանը չմասնակցելու որոշում կայացնելը: «Միջոցներ փնտրելու, ձեռք բերելու և օգտագործելու կարողությունը առանցքային դեր ունի ցանկացած միավորման, անկախ չափից, արդյունավետ գործունեության համար: Միավորումների ազատության իրավունքը ներառում է ներպետական, արտասահմանյան և միջազգային աղբյուրներից մարդկային, նյութական և ֆինանսական միջոցներ որոնելու, ստանալու և օգտագործելու իրավունքը» (A/HRC/23/39, պարբ. 8):

**Խաղաղ հավաքների ազատություն:** Խաղաղ հավաքը ժամանակավոր, ոչ բռնի հավաք է մասնավոր կամ հանրային տարածքում՝ կոնկրետ նպատակով: Այն ներառում է ցույցերը, գործադուլները, թափորները, երթերը կամ նստացույցերը:

**Պետական գործերին մասնակցելու իրավունք:** Պետական գործերի վարումը լայն հասկացություն է, որը վերաբերում է քաղաքական

իշխանության, մասնավորապես օրենսդիր, գործադիր և վարչական իշխանության իրացմանը: Այն ընդգրկում է պետական կառավարման բոլոր ասպեկտները, և քաղաքականության ձևավորումն ու իրականացումը միջազգային, ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներում: Մասնակցությունը կարող է լինել ազատորեն ընտրված ներկայացուցչի միջոցով կամ ուղղակիորեն, սահմանադրության հաստատման կամ փոփոխման, օրենսդրության նախագծման և քաղաքականությունների մշակման, հանրաքվեի միջոցով պետական հարցերի որոշման, տեղական հարցերի վերաբերյալ որոշումների կայացման լիազորություն ունեցող ժողովրդական ժողովներին մասնակցության միջոցով: Միավորումների ազատության իրավունքը, այդ թվում քաղաքական և հանրային գործերով մտահոգ կազմակերպություններ ձևավորելու և դրանց միանալու իրավունքը, կարևոր նշանակություն ունի պետական գործերին մասնակցության իրավունքի համար:

**Խտրականության բացառում:** Վերոնշյալ բոլոր իրավունքները երաշխավորված են բոլոր անձանց համար, առանց որևէ հիմքով տարբերակման, ինչպիսիք են ռասան, գույնը, սեռը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ կարծիքը, գենդերային ինքնությունը, ազգային կամ սոցիալական ծագումը, սեփականությունը, ծնունդը կամ այլ կարգավիճակը: Այս իրավունքները վերաբերում են կանանց, երեխաներին, տեղաբնիկ բնակչությանը, հաշմանդամություն ունեցող անձանց, փոքրամասնություններին կամ մեկուսացման կամ բացառման վտանգին ենթակա խմբերին պատկանող անձանց, այդ թվում նրանց, ովքեր տուժել են խտրականությունից իրենց սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության պատճառով, քաղաքացիներ չհանդիսացող անձանց, այդ թվում՝ քաղաքացիություն չունեցող անձինք, փախստականներ կամ միգրանտներ, ինչպես նաև միավորումներին, այդ թվում՝ չգրանցված խմբերին:

Միջազգային այս չափանիշները կիրառվում են Պետության բոլոր ճյուղերի նկատմամբ՝ գործադիր, օրենսդիր և դատական, պետական կամ կառավարական իշխանության այլ մարմիններ, ցանկացած մակարդակում՝ ազգային, տարածաշրջանային կամ տեղական:

Պետությունից նաև պահանջվում է մարդկանց պաշտպանել մասնավոր անձանց կամ միավորների գործողություններից, որոնք հնարավոր է խոչընդոտեն ազատությունների իրացմանը: Պետությունների առաջնային պատասխանատվությունն է խթանել և պաշտպանել այս իրավունքների իրացումը:

Արտահայտման, միավորումների և խաղաղ հավաքների ազատությունը իր հետ բերում է հատուկ պարտականություններ և պատասխանատվություն, և ուստի դրանց իրացումը կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների: Ցանկացած սահմանափակում պետք է նախատեսված լինի օրենքով և պետք է խստորեն անհրաժեշտ լինի այլոց իրավունքները կամ համբավը հարգելու առումով, կամ ազգային անվտանգության, կամ հասարակական կարգի (ordre public), կամ հանրային առողջության, կամ բարքերի պահպանման համար: Այսպիսի հիմքերը ոչ մի պարագայում չպետք է օգտագործվեն որպես արդարացում՝ բազմակուսակցական ժողովրդավարության, ժողովրդավարական սկզբունքների և մարդու իրավունքների ցանկացած տեսակի քարոզչության ճնշման համար:

Մարդու իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ 34, Հոդված 19. Տեսակետ ունենալու և այն արտահայտելու ազատություն, CCPR/C/GC/34, և Ընդհանուր մեկնաբանություն թիվ 25, Հոդված 25. Պետական գործերին մասնակցելու իրավունք, CCPR/C/21/Rev.1/Add.7: ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի զեկույցներ խաղաղ հավաքների և միավորումներ կազմելու ազատության վերաբերյալ, A/HRC/20/27 և A/HRC/23/39:

*«Մեզանից ոչ ոք, այդ թվում կառավարությունները, չի կարող ինքնուրույն տիրապետել փաստերին, լավագույն գաղափարներին կամ իմանալ այն խնդիրների հիմքում ընկած պատճառները, որոնք փորձում ենք լուծել: Մեզ կարող է օգնել միայն հավաքական իմաստնությունը: Եվ ուստի մեզ համար կարևոր է նախքան որոշում կայացնելը լսել բոլոր շահագրգիռ կողմերի, հատկապես մեկուսացված խմբերի ձայները: Օրինակ՝ Մարդու իրավունքների կոմիտեն տեղեկություններ է հավաքում տարաբնույթ*

*աղբյուրներից. հենց կառավարություններից, Միավորված ազգերի կազմակերպությունից և քաղաքացիական հասարակությունից: Սա նպաստում է հիմնավորված եզրափակիչ դիտարկումների և առաջարկությունների կազմմանը, որոնք ուղենշում են այն գործնական քայլերը, որ կառավարությունները պետք է ձեռնարկեն իրենց օրենքներն ու իրականությունը ավելի ներդաշնակեցնելու իրենց կողմից վավերացված մարդու իրավունքների պայմանագրերի ներքո իրենց պարտավորություններին»:*

Պրոֆեսոր Սըր Նայջլ Ռոդլի, նախագահ, Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների կոմիտե, հոկտեմբեր, 2014 թվական

## 4. Մարտահրավերները, որոնց բախվում են քաղաքացիական հասարակության դերակատարները

Տեղական, ազգային, տարածաշրջանային կամ համաշխարհային մակարդակում քաղաքացիական հասարակության դերակատարները կարող են հանդիպել խոչընդոտների՝ ուղղված իրենց օրինակարգ գործողությունների ազդեցության կանխարգելմանը, նվազագույնի հասցնելուն, դադարեցմանը կամ հետ շրջելուն, քանի որ նրանք քննադատաբար են տրամադրված կամ ընդդիմադիր են կառավարության դիրքորոշումներին, քաղաքականություններին կամ գործողություններին:

Դրանց թվում կարող են լինել ազատության և անկախության հարցում խոչընդոտները, կամ ՔՀԴ-ների հետապնդումները, նրանց ահաբեկումը և նրանց նկատմամբ ճնշամիջոցները (այն է՝ պատիժ կամ վրեժ):

**Քաղաքացիական հասարակության աշխատանքի ազդեցությունը կանխարգելելու, նվազագույնի հասցնելու, դադարեցնելու կամ հետ շրջելու ուղիները**




## 4.1. Օրենսդրական կամ նորմատիվային բնույթի միջոցառումներ, որոնք խոչընդոտում են քաղաքացիական հասարակության աշխատանքը

Օրենքները և նորմատիվային ակտերը կարող են սահմանափակել քաղաքացիական հասարակության դերակատարների ազատությունն ու անկախությունը, օրինակ, հետևյալ միջոցներով.

- պահանջելով գրանցում առանց շոշափելի օգուտների (օրինակ՝ հարկային արտոնությունների).
- սահմանափակելով գործունեության տեսակները.
- քրեական պատժամիջոցներ չգրանցված գործունեության համար.

- որոշակի միավորումների, այդ թվում միջազգային ՀԿ-ների կամ արտասահմանյան ֆինանսավորում ստացող միավորումների կամ մարդու իրավունքների ասպարեզում գործող խմբերի գրանցման հարցում սահմանված սահմանափակումներ.
- սահմանելով չափանիշներ, թե ով կամ որ կազմակերպությունը կարող է այս կամ այն տեսակի գործողություններ ձեռնարկել կամ սահմանափակելով այդ գործողությունները.
- սահմանափակելով ֆինանսավորման աղբյուրները (այն է՝ արտասահմանյան աղբյուրները), և՝
- խաղաղ հավաքների, միավորումներ կազմելու և արտահայտման ազատությունը կարգավորող օրենսդրություն, որը պարունակում է խտրական դրույթներ կամ անհավասարաչափ բացասական ազդեցություն ունի որոշ խմբերի վրա:

Ի լրումն, ծանրաբեռնող վարչական ընթացակարգերը և հայեցողական միջոցները, հնարավոր է, արգելակեն կամ ձգձգեն ՔՀԴ-ների գործողությունները:

Երբ սահմանափակվում է տեղեկատվության ազատության իրավունքը, նվազում է ՔՀԴ-ների կարողությունը՝ արդյունավետորեն միջամտելու քաղաքականության ձևավորման ասպարեզում: Մասնակցության չափազանց նեղ և սահմանափակ եղանակները (օրինակ՝ ՔՀԴ-ներին տրված դիտորդի կարգավիճակ կամ խոսելու սահամանափակ իրավունքներ) որոշումների կայացման գործընթացում նույնպես խոչընդոտ են ներգրավվածության հարցում: Միավորումներ կազմելու ազատության չափանիշները միջազգային մակարդակում կիրառելի են նույնքան, որքան ազգային և տեղական մակարդակում[3]:

## 4.2. Կամայական միջոցառումներ

Երբ քաղաքացիական հասարակությունը քննադատաբար է տրամադրված կամ ընդդիմադիր է կառավարության դիրքորոշումներին,

[3] ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի զեկույցը բազմակողմ հաստատությունների պարագայում խաղաղ հավաքների և միավորումներ կազմելու ազատության իրավունքների վերաբերյալ, A/69/365:

քաղաքականություններին և գործողություններին, օրենքներում ոչ հստակ դրույթները կարող են կամայական կիրառում գտնել օրինականության և օրինակարգության դիմակի ներքո (օր.՝ փողերի լվացման դեմ պայքարի, ահաբեկչության հակազդեցության, ազգային անվտանգության, հասարակական բարքերի, ազգային ինքնիշխանության պաշտպանության, զրպարտության դեմ պայքարի պատրվակով), ինչը կարող է հանգեցնել.

- ղեկավարման և ներքին կառավարման կամայական ստուգում.
- գրանցման չեղարկման սպառնալիք կամ փաստացի չեղարկում.
- գրասենյակի բռնի փակում.
- սեփականության խուզարկություն կամ բռնագրավում.
- չափից դուրս տուգանքներ.
- շինծու մեղադրանքներով հետապնդումներ.
- կամայական ձերբակալություններ և ազատազրկում.
- արգելք ճամփորդությունների հարցում.
- քաղաքացիությունից զրկում, և՝
- բողոքի ցույցերի կամ հավաքների կամայական սահմանափակումներ կամ չեղարկումներ:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի՝ քաղաքացիական հասարակության համար օրենսդրորեն և փաստացի անվտանգ և բարենպաստ միջավայրի ստեղծման և պահպանման մասին թիվ 24/21 բանաձևը նշում է. «Որոշ դեպքերում ներպետական օրենսդրական և վարչական դրույթները ... ուղղված են եղել կամ միտումնավոր օգտագործվել են քաղաքացիական հասարակության գործունեությունը խոչընդոտելու կամ ապահովությունը վտանգելու նպատակով՝ հակառակ միջազգային իրավունքի»:

## 4.3. Օրենսդրական կարգավորման շրջանակից դուրս ոտնձգություններ, ահաբեկումներ և ճնշամիջոցներ

Ի լրումն օրենսդրորեն նախատեսված սահմանափակումների և կամայականորեն կիրառվող օրենքների, որոնք կարող են սահմանափակել քաղաքացիական հասարակության գործունեության տարածությունը, ՔՀԴ-ներին կամ նրանց ընտանիքներին ուղղված սպառնալիքները, հոգեբանական ճնշման այլ տեսակները կամ ֆիզիկական բնույթի հարձակումները կարող են թույլ չտալ նրանց ազատ աշխատել:

Նման օրինակներ են՝

- հեռախոսային սպառնալիքները,
- հսկողության տակ լինելը,
- ֆիզիկական հարձակումները կամ սեռական բնույթի ոտնձգությունները,
- սեփականության ոչնչացումը,
- աշխատանքից կամ եկամտի աղբյուրից զրկելը,
- քաղաքացիական հասարակության սուբյեկտներին որպես «պետության թշնամի», ,դավաճանե կամ ,արտաքին շահը սպասարկողե պիտակավորող քարոզարշավները,
- անհետացումները,
- խոշտանգումները,
- սպանությունները:

*«Մարդիկ և քաղաքացիական հասարակության խմբերը հաճախ վտանգում են իրենց կյանքը՝ բարելավելու այլոց կյանքը: Նրանք ճշմարտությունն են ասում նույնիսկ այն դեպքերում, երբ գիտեն, որ իրենց կարող են ընդմիշտ լռեցնել: Նրանք ուշադրությունը սևեռում են այնպիսի*

*հիմնախնդիրների վրա, որոնք այլ մարդիկ շրջանցում են, կամ որոնց գոյության մասին չեն էլ ենթադրում: Նրանք պաշտպանում են մեր շահերը: Նրանք արժանի են իրենց իրավունքներին»:*

Հատված ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի-մունի՝
Քաղաքացիական հասարակության աջակցմանն ուղղված
բարձրաստիճան միջոցառմանն ունեցած ելույթից,
սեպտեմբերի 23, 2013 թվական

*«Հետապնդումները, ահաբեկումները և բռնի միջոցների կիրառումը ճնշում են գործադրում մարդու իրավունքների պաշտպանների և վկաների վրա՝ թույլ չտալով, որ նրանք բարձրաձայնեն իրենց հիմնախնդիրներն ու աշխատեն ՄԱԿ-ի կամ միջազգային այլ կազմակերպությունների հետ: Միևնույն ժամանակ, այդպիսի գործողությունները ծառայում են որպես հանրության շրջանում վախի սերմանման և ճնշող միջավայրի ստեղծման միջոց՝ խեղդելով ազատ արտահայտվելու, միավորումներ կազմելու և խաղաղ հավաքների իրավունքները, որոնք առանցքային նշանակություն ունեն ժողովրդավարական հասարակության համար»:*

Դեսպան Լաուրա Դյուպյուի Լասեր, Ուրուգվայի մշտական
ներկայացուցիչ ՄԱԿ-ի Ժնևի գրասենյակում և Մարդու
իրավունքների խորհրդի նախագահ (2011-2012 թթ.)

## Կին իրավապաշտպաններ

Կին իրավապաշտպանները ենթարկվում են նույն վտանգներին, ինչ իրենց տղամարդ գործընկերները, սակայն լինելով կին՝ նրանք միաժամանակ նպատակաուղղված կերպով ենթարկվում են գենդերային բնույթի սպառնալիքների և բռնությունների: Հաճախ կին իրավապաշտպանի աշխատանքը դիտարկվում է որպես մարտահրավեր՝ նետված ընտանեկան և գենդերային դերերի մասին հասարակության ավանդական պատկերացումներին, ինչը կարող

է հանգեցնել լայն հանրության և իշխանությունների թշնամական վերաբերմունքին: Կին իրավապաշտպանները պիտակավորվում և արտաքսվում են համայնքների ղեկավարների, կրոնական խմբերի, ընտանիքների և համայնքների կողմից, ովքեր նրանց գործունեությունը սպառնալիք են համարում կրոնի, պատվի կամ մշակույթի համար:

Բացի այդ, այդ գործունեությունն ինքնին կամ նրանց հետապնդած նպատակները (օրինակ, կանանց իրավունքների կամ այլ գենդերային իրավունքների իրացում) նրանց հարձակումների թիրախ են դարձնում: Նրանց ընտանիքները ևս սպառնալիքների և բռնության թիրախ են դառնում, ինչն ուղղված է կին իրավապաշտպանների մեկուսացմանը և նրանց հետագա գործունեության ապախրախուսմանը: Կին իրավապաշտպաններն իրենց տղամարդ գործընկերներից ավելի շատ են ենթարկվում բռնության որոշակի տեսակների կամ այլ ոտնձգությունների, նախապաշարմունքի, մեկուսացման և մերժման զոհ դառնում: Հարկ է ընդունել այս մարտահրավերների առկայությունը, որ հնարավոր լինի հզորացնել պաշտպանության մեխանիզմները և կանանց խնդիրներին արձագանքման այլ միջոցները՝ թե՛ տեղական և թե՛ միջազգային մակարդակում: Հարկ է իրականացնել կին իրավապաշտպանների ահաբեկման, սպառնալիքների, նրանց նկատմամբ բռնության և դաժան վերաբերմունքի այլ դրսևորումների անհապաղ և մանրակրկիտ հետաքննություն՝ լինեն դրանք իրականացված պետության, թե ոչ պետական մարմինների կողմից:

2013 թվականին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարությունն ընդունել է իր պատմության մեջ առաջին՝ կին իրավապաշտպաններին վերաբերող բանաձևը (թիվ 18/181), որտեղ հատուկ մտահոգություն է արտահայտվում տարբեր տարիքի կին իրավապաշտպանների նկատմամբ կիրառվող համակարգված և կառուցվածքային խտրականության ու բռնության վերաբերյալ և կոչ է արվում պետություններին՝ ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցառումները նրանց պաշտպանվածությունն ապահովելու և գենդերային հեռանկարն իրենց գործողություններում ներառելու համար՝ մարդու իրավունքների պաշտպանության անվտանգ և բարենպաստ միջավայր ձևավորելու նպատակով:

**Կոտ դ'Իվուարի՝** «Իրավապաշտպանների խրախուսման և պաշտպանության մասին» 2014 թ. ընդունված օրենքը պարունակում է Իրավապաշտպանների մասին հռչակագրով ճանաչված իրավունքներից շատերը, ներառյալ ազատ արտահայտվելու, միավորումներ կազմելու և հասարակական կազմակերպություններ ստեղծելու իրավունքները, տարբեր ռեսուրսներից օգտվելու իրավունքը, միջազգային կառույցներին տեղեկություններ հայտնելու իրավունքը և ճնշամիջոցներից պաշտպանված լինելու իրավունքը: Օրենքը նախատեսում է իրավապաշտպաններին, նրանց ընտանիքի անդամներին և բնակարանները հարձակումներից պաշտպանելու և այդպիսի հարձակումների դեպքում հետաքննություն անցկացնելու և մեղավորներին պատժելու պարտավորություն: Օրենքում ճանաչվում են այն հատուկ վտանգները, որոնց բախվում են կին իրավապաշտպանները, և նրանց դրանցից պաշտպանելու անհրաժեշտությունը: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, այդ թվում՝ Կոտ դ'Իվուարի իրավապաշտպանների կոալիցիան և Արևմտյան Աֆրիկայի իրավապաշտպանների ցանցը, ողջունել են Կոտ դ'Իվուարի այս օրենքը:

*ՄԱԿ-ի հետ համագործակցելու պատճառով ֆիզիկական անձանց և խմբերի ահաբեկումը և նրանց դեմ ճնշամիջոցների կիրառումը*

*«Քաղաքացիական հասարակությունը առանցքային նշանակություն ունի Միավորված ազգերի կազմակերպության գործունեությունը մեր օրակարգի բոլոր կետերով առաջ մղելու առումով ոչ միայն ի նպաստ մարդու իրավունքների, այլ նաև խաղաղության, անվտանգության և զարգացման: Քաղաքացիական հասարակությունը նախկինում երբևէ այսքան կարևոր կամ անհրաժեշտ չի եղել: Միավորված ազգերի կազմակերպության հետ համա-*

*գործակցող անձանց ահաբեկումն ու նրանց նկատմամբ ճնշամիջոցների կիրառումն անընդունելի է՝ ոչ միայն այն պատճառով, որ այդ անձինք օգնում են մեզ իրականացնել Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով մեզ տրված լիազորությունները, այլև այն պատճառով, որ այդպիսի միջոցները մեզ հետ աշխատելու հարցում ապախրախուսում են այլ անձանց: Մենք պարտավոր ենք բոլոր մակարդակներում քայլեր ձեռնարկել ժողովրդավարության ձայնը առավել լսելի դարձնելու համար»:*

Հատված ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի-մունի՝
Քաղաքացիական հասարակության աջակցմանն ուղղված բարձրաստիճան միջոցառմանն ունեցած ելույթից,
սեպտեմբերի 23, 2013 թվական

*«Միավորված ազգերի կազմակերպությունը չէր կարողանա կատարել իր անգնահատելի աշխատանքը, եթե չլինեին մեզ հետ համագործակցող մարդիկ: Երբ նրանց ահաբեկում և բռնաճնշումների թիրախ են դարձնում, նրանք տուժում են, սակայն միևնույն ժամանակ մենք բոլորս ենք դառնում առավել անպաշտպան: Երբ նրանց համագործակցությունը ճնշվում է, վտանգվում է մարդու իրավունքների ոլորտում իրականացվող մեր աշխատանքը»:*

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի-մունի ելույթը
ճնշամիջոցների հարցով բարձրաստիճան խմբի քննարկմանը, Նյու Յորք, 2011 թվական

Հատկապես վրդովեցուցիչ են ՄԱԿ-ի հետ մարդու իրավունքների ոլորտում համագործակցող անձանց և խմբերի ահաբեկումներն ու նրանց նկատմամբ ճնշամիջոցների կիրառումը: Չնայած ՄԱԿ-ի մարդու իրավունքների համակարգի աշխատանքին անհատների և խմբերի մասնակցության անհրաժեշտության ու իրավունքի համընդ-

հանուր ճանաչմանը՝ շարունակ հաղորդումներ են ստացվում նման գործողությունների մասին:

ՄԱԿ-ի կառույցների կամ պաշտոնատար անձանց հետ նրանց շփման (օրինակ՝ հաղորդումներ, նյութերի ներկայացում, հանդիպումներ և այլն) պատճառով անհատ ՔՀԴ-ները բախվում են ահաբեկումների կամ բռնաճնշումների, ինչպես օրինակ, պետական պաշտոնյաների կողմից սպառնալիքներ կամ ահաբեկումներ, ներառյալ՝ բարձրաստիճան պետական ղեկավարների հրապարակային հայտարարություններ, հանդիպումների մեկնող անձանց ուղևորությունների կանխում, ինչպես նաև՝ ՔՀԴ-ները կարող են պարզել, որ իրենց գործունեությունը վերահսկվում կամ սահմանափակվում է: Հազվադեպ չեն սոցիալական ցանցերում, տպագիր մամուլում կամ հեռուստատեսությամբ տարվող վարկաբեկող արշավները: Սպառնալիքներ կարող են հնչեցվել հեռախոսազանգերի, տեքստային հաղորդագրությունների կամ անմիջական շփումների միջոցով: Հնարավոր են ՔՀԴ-ների ձերբակալության, ծեծի, տանջանքների ենթարկման կամ անգամ սպանության դեպքեր:

Մարդու իրավունքների խորհուրդն այս հարցի առնչությամբ մի քանի բանաձև է ընդունել, այդ թվում՝ թիվ 24/24 և թիվ 12/2 բանաձևերը: Գլխավոր քարտուղարն ամեն տարի հաշվետվություն է ներկայացնում ՄԱԿ-ի հետ մարդու իրավունքների ոլորտում համագործակցության համար բռնաճնշումների ենթարկվելու ենթադրյալ դեպքերի վերաբերյալ: Թե՛ Գլխավոր քարտուղարը և թե՛ Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարը բազմիցս հայտարարել են, որ այդ հալածանքներն անընդունելի են, և որ նման գործողությունների նկատմամբ ՄԱԿ-ը պետք է ձեռնարկի առավել միասնական ու համակարգված պատասխան քայլեր: Մարդու իրավունքների հարցերով զբաղվող այլ կազմակերպություններ ևս կտրուկ ու հրապարակային դիրքորոշում են հայտնել բռնաճնշումների դեմ:

## Մարդու իրավունքների մասին միջազգային պայմանագրերի՝ բռնաճնշումներին վերաբերող դրույթները

**«Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասինե» միջազգային դաշնագրի Կամընտիր արձանագրություն. Հոդված 13**

«Մասնակից պետությունը պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ ապահովելու, որ իր իրավազորության ներքո գտնվող անձինք սույն արձանագրության համաձայն Հանձնաժողովին դիմելու պատճառով չենթարկվեն վատ վերաբերմունքի կամ ահաբեկումների»:

**«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի Կամընտիր արձանագրության՝ հաղորդումների ներկայացման կարգին վերաբերող դրույթներ. Հոդված 4**

«Մասնակից պետությունը պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկի՝ ապահովելու, որ իր իրավազորության ներքո գտնվող անձանց մարդու իրավունքները չխախտվեն, նրանք չենթարկվեն վատ վերաբերմունքի կամ ահաբեկումների՝ սույն արձանագրության համաձայն Հանձնաժողովին որևէ հաղորդում ներկայացնելու կամ Հանձնաժողովի հետ համագործակցելու պատճառով»:

**«Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի Կամընտիր արձանագրություն. Հոդված 11**

«Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ բոլոր քայլերը, որպեսզի իրենց իրավազորության ներքո գտնվող անձինք չենթարկվեն ահաբեկումների կամ վատ վերաբերմունքի՝ սույն արձանագրության համաձայն Հանձնաժողովին որևէ հաղորդում ներկայացնելու համար»:

**Ավստրիայի** «Օմբուդսմենի խորհրդի մասին»: Օրենքի 18-րդ հոդվածը սահմանում է. «Ոչ ոք չպետք է պատժվի կամ այլ կերպ վնաս կրի Խոշտանգումների կանխարգելման հարցերով ենթահանձնաժողովին, Օմբուդսմենի խորհրդին կամ վերջինիս կողմից ստեղծված հանձնաժողովներին տեղեկություններ ներկայացնելու համար»:

**Մոնտենեգրոյում** 2007 թ. ընդունված Սահմանադրության 18-րդ կետը սահմանում է. «Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով յուրաքանչյուր ոք իրավունք ունի բողոք ներկայացնել միջազգային հաստատություններին»:

Իրավական և վարչական խոչընդոտները՝ զուգակցված ոտնձգություններով, ահաբեկմամբ և բռնաճնշումներով, նվազեցնում են կառուցողական և համալրող այն դերը, որ քաղաքացիական հասարակությունը պետք է ունենա կառավարության հետ իր գործընկերային հարաբերություններում: Նրանք հետապնդում են քաղաքացիական հասարակության գործունեությունը կանխելու, նվազագույնի հասցնելու, վարկաբեկելու, կասեցնելու և շրջադարձելու նպատակ: Այս տարածությունը պաշտպանելուց և խրախուսելուց, ինչպես նաև անվտանգ ու նպաստավոր միջավայր ապահովելուց հրաժարումը հակասում է մարդու իրավունքների մասին միջազգային պայմանագրերի շրջանակներում պետությունների ստանձնած պարտավորություններին:

ՔՀԴ-ներին պաշտպանելու հիմնական պարտականությունը կրում են պետությունները, սակայն երբ քաղաքացիական հասարակության գործունեության տարածքը կամ իրենք՝ ՔՀԴ-ները վտանգի են ենթարկվում մարդու իրավունքները առաջ մղելու իրենց գործունեության պատճառով, միջազգային համայնքի ընդհանուր շահերից և պարտականություններից է բխում նրանց աջակցելն ու պաշտպանելը:

## 5. Ի՞նչ կարող եմ անել ես: ՄԱԿ-ին դիմելու գործընթացը

Մարդու իրավունքների ոլորտում միջազգային չափանիշներն ապահովում են եզակի միջազգային հարթակ, որին կարող են դիմել ՔՀԴ-ները՝ աջակցության և ուղղորդման համար: Այս հարթակը ներառում է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակը (ՄԻԳՀԳ), մարդու իրավունքների պայմանագրային մարմինները և Մարդու իրավունքների խորհուրդն ու դրա մեխանիզմները (Հատուկ ընթացակարգերի մանդատներ, Համընդհանուր պարբերական դիտարկում և այլն):

*«Մարդու իրավունքների ոլորտում միջազգային չափանիշներն ապահովում են համաշխարհային շրջանակ, որը քաղաքացիական կազմակերպություններին օժտում է միջազգայնորեն համաձայնեցված նորմերի իրականացման ուղղությամբ աշխատանքներ տանելու կարողությամբ: Այս չափանիշները ոչ միայն լեգիտիմացնում են քաղաքացիական կազմակերպությունների գործունեությունը, այլև օգտակար հարթակ ապահովում ինքնուրույն դիտարկելու և զեկուցելու մարդու իրավունքների ասպարեզում կառավարության պարտավորությունների իրականացման վիճակի վերաբերյալ: Մարդու իրավունքների ոլորտի մեխանիզմներն ի հայտ են եկել որպես շատ կարևոր հարթակ, որից հնարավոր է հանդես գալ հօգուտ քաղաքացիական հասարակության համար ավելի բարենպաստ միջավայրի: Հատկապես սահմանափակող պայմաններում ՄԱԿ-ի մարդու իրավունքներով զբաղվող մարմինները քաղաքացիական հասարակության ազգային խմբերի համար ծառայում են որպես կարևորագույն հաղորդալար՝ բարձրացնելու իրազեկությունը և երկխոսություն հարուցելու զգայուն թեմաների վերաբերյալ»:*

Դր. Դենի Սրիսկանդարաջահ, Գլխավոր քարտուղար, Քաղաքացիների մասնակցության համաշխարհային դաշինք (CIVICUS), հոկտեմբեր, 2014 թվական

Կա երկու ուղի, որոնց միջոցով ՄԱԿ-ի մարդու իրավունքների մեխանիզմները կարող են պաշտպանել քաղաքացիական հասարակության գործունեության տարածությունը[4]:

[4] *Այն ընթերցողները, որոնք արդեն իսկ ծանոթ են այս մեխանիզմների հիմնական առանձնահատկություններին, կարող են ծանոթանալ ՄԻԳՀԳ-ի քաղաքացիական հասարակության համար ձեռնարկին, այն է՝ ,Ինչպես աշխատել ՄԱԿ-ի Մարդու իրավունքների ծրագրի հետ: Հավելյալ ուղղորդում և խորհրդատվություն կարող եք գտնել քաղաքացիական հասարակության համար գործնական ուղեցույցների շարքում, այդ թվում ,Ինչպես ձեռնարկել Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների վերաբերյալ առաջարկություններին հաջորդող գործողություններ [How to Follow Up on United Nations Human Rights Recommendations] անվանումով ձեռնարկում:*

*Քաղաքացիական հասարակության առջև առկա խոչընդոտների, սպառնալիքների և հաջողված փորձի փաստաթղթավորում:* Մարդու իրավունքների հետ կապված իրավիճակի վերաբերյալ փաստաթղթավորումը հիմք է ծառայում ՄԱԿ-ի մարդու իրավունքների մեխանիզմների կողմից միջամտությունների համար: Փաստաթղթերով հիմնավորված և ստուգված տեղեկությունները ՔՀԴ-ների կողմից գործողությունների ծանրակշիռ հիմնավորում են հանդիսանում, ավելի վստահելի և համոզիչ են, դրանք դժվար է մերժել, և այդ տեղեկությունները մարդու իրավունքների խթանման և պաշտպանության արդյունավետ ուղի են: ՔՀԴ-ներին առաջարկվում է փաստաթղթեր ներկայացնել (օրինակ՝ ճշգրիտ, փաստական տեղեկություններ, խնամքով արված վերլուծություն և կոնկրետ առաջարկություններ) քաղաքացիական հասարակության դերակատարների և նրանց գործունեության տարածքի առջև առկա խոչընդոտների, վտանգների մասին, ինչպես նաև ՄԱԿ-ի մարդու իրավունքների մեխանիզմներին փոխանցել հաջողված փորձի վերաբերյալ տեղեկություններ:

*Առկա տարածության օգտագործում:* ՔՀԴ-ներին առաջարկվում է օգտվել միջազգային խորհրդաժողովներին և հանդիպումներին մասնակցելու հնարավորությունից կամ փորձագետների այցելություններից: Հնարավորությունները կարելի է օգտագործել ելույթների, ճեպազրույցների կազմակերպման և մասնակիցների միջև կապերի ստեղծման միջոցով՝ բարձրացնելու իրազեկության մակարդակը քաղաքացիական հասարակության գործունեության տարածքի հարցերի վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել առաջարկություններ և հաջողակ ռազմավարություններ:

ՄԱԿ-ի մարդու իրավունքների մեխանիզմների հետ քաղաքացիական հասարակության գործունեության տարածքի հետ կապված հարցերի վերաբերյալ աշխատելը ՔՀԴ-ներին հնարավորություն է ընձեռում օգտագործելու արդյունքները (օրինակ՝ միջազգային եզրակացություններ և առաջարկություններ կառավարություններին՝ իրավական, վարչական և այլ միջոցառումների վերաբերյալ) քաղաքացիական հասարակության գործունեության տարածքի

պաշտպանությանն ու տեղերում ՔՀԴ-ների հնարավորությունների ընդլայնմանն ուղղված իրենց գործունեության մեջ:

| | | | |
|---|---|---|---|
| Տեղեկությունների տրամադրում<br><br>Մասնակցություն | ՄԱԿ-ի մարդու իրավունքների համակարգ | Միջազգային<br>• բացահայտումներ<br>• եզրակացություններ<br>• զեկույցներ<br>• բանաձևեր<br>• հայտարարություններ<br>• բողոքներ | Տեղերում գործողություններ նախաձեռնելու և դրանց աջակցելու միջոցներ |

**ՄԱԿ-ի մարդու իրավունքների ասպարեզում մանդատների և մեխանիզմների գործունեության արդյունքների օրինակներ.**

- պայմանագրային մարմինների եզրափակիչ դիտարկումները, ինչպես նաև տեսակետներն ու առաջարկությունները առանձին դեպքերի վերաբերյալ.
- որևէ երկիր կատարած այցի վերաբերյալ զեկույցները, գնահատականները, առաջարկությունները և եզրակացությունները, թեմատիկ զեկույցները և առանձին դեպքերի վերաբերյալ հաղորդագրությունները Մարդու իրավունքների խորհրդի հատուկ ընթացակարգերի (անկախ փորձագետների) կողմից.
- Համընդհանուր պարբերական դիտարկման առաջարկությունները.
- Մարդու իրավունքների խորհրդի և Ընդհանուր վերհաժողովի բանաձևերն ու որոշումները.
- Հետազոտությունների հանձնաժողովների, փաստահավաք առաքելությունների և Մարդու իրավունքների խորհրդի կողմից ստեղծված այլ՝ մարդու իրավունքների հարցերով քննություն իրականացնող հատուկ մեխանիզմների զեկույցները.
- ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հայտարարությունները.
- ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի հայտարարությունները, զեկույցները և ուսումնասիրությունները (օր.՝ տեղերում ներկայացուցչությունների գործունեության վերաբերյալ զեկույցներ, որևէ երկրի կամ թեմայի շուրջ իրավիճակի վերա-

բերյալ զեկույցներ և ուսումնասիրություններ՝ լիազորված Մարդու իրավունքների խորհրդի կամ ՄԱԿ-ի Ընդհանուր վեհաժողովի կողմից)

- Գլխավոր քարտուղարի տարեկան զեկույցները մարդու իրավունքների ասպարեզում ՄԱԿ-ի հետ համագործակցող անհատների կամ խմբերի նկատմամբ ահաբեկումների կամ ճնշամիջոցների կիրառման դեպքերի վերաբերյալ.
- Գլխավոր քարտուղարի, Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի կամ մարդու իրավունքների փորձագետների կողմից հրապարակային ելույթներում պարունակվող դիմումներ երկրներին:

Այս եզրակացություններն ու առաջարկությունները կարող են նաև քարոզչության և ուղղորդման զորեղ գործիք լինել՝ աջակցելու տեղական գործողություններին և ձևավորելու դրանք, ինչպես նաև իրականացնելու պաշտպանություն: Օրինակ, ՔՀԴ-ները կարող են.

- ՄԱԿ-ի մարդու իրավունքների համակարգի կողմից արված առաջարկությունների իրականացման ուղղությամբ աշխատել կառավարման կենտրոնական և տեղական մարմինների հետ.
- բարձրացնել տեղական համայնքների իրազեկվածության մակարդակը երկրում մարդու իրավունքների հետ կապված իրողությունների վերաբերյալ միջազգային վերլուծությունների և ակնկալիքների մասին.
- դիտարկել և գնահատել իշխանության կենտրոնական և տեղական մակարդակների մարմինների կողմից արձագանքներն ու ձեռնարկված միջոցառումները.
- ամրապնդել շահերի առաջմղման առկա նյութերը՝ հեղինակավոր, անկողմնակալ լեզվի, արդյունավետ ռազմավարությունների կիրառման և առաջավոր փորձի վրա հիմնված լուծումների միջոցով.

- ձևավորել կարծիքներ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներսում և նրանց միջև, ինչպես նաև լայն հանրության շրջանում.
- գործընկերություններ հիմնել.
- որակապես բարելավել պետական պաշտոնատար անձանց հետ երկխոսությունը.
- մասնակցել քաղաքականությունների ձևավորմանը.
- նախաձեռնել իրավական գործողություններ/դատական հայցեր.
- մասնակցություն ունենալ մարդու իրավունքների մեխանիզմների հաջորդող ընթացակարգերում.
- գնահատել և տեխնիկական խորհրդատվություն տրամադրել այն անհատներին, որոնք ցանկանում են անհատական բողոք ներկայացնել ՄԱԿ-ի մարդու իրավունքների մեխանիզմներին:

ՄԱԿ-ի եզրակացությունները այլ երկրների վերաբերյալ նույնպես այլ վայրերում համանման փորձին առնչվող ռազմավարությունների մասին տեղեկությունների հարուստ աղբյուր են:

## Ինչպես են աշխատում մարդու իրավունքների մեխանիզմները

Ընդհանուր առմամբ, ՄԱԿ-ի մարդու իրավունքների մեխանիզմները մարդու իրավունքների հետ կապված հիմնախնդիրներին լուծում տալու գործողություններում հետևում են համանման գործընթացի: Ամենաբազմազան աղբյուրներից, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության դերակատարներից հավաքվում են տեղեկությունները: Դրանք վերլուծության են ենթարկվում և խաչաձև ստուգվում՝ հետևողականություն, վստահելիություն և ճշգրտություն ապահովելու նպատակով: Մեխանիզմը տվյալ պետության հետ սկսում է երկխոսություն՝ գրավոր կամ դեմ առ դեմ, պարզաբանելու տեղեկատվության բովանդակությունը: Այն կարող է առաջարկություն-

ներ ներկայացնել պետությանը, թե ինչպես լուծել հիմնախնդիրը, և օգնություն առաջարկել՝ աջակցելու առաջարկությունների իրականացմանը: Այնուհետև հավաքվում են հավելյալ տեղեկություններ՝ գնահատելու առաջարկությունների իրականացման ուղղությամբ արձանագրված առաջընթացը:




2011 թ. ապրիլին Հաշմանդամություն ունեցող անձանց ներկայացուցիչների իսպանական կոմիտեն (CERMI) մասնակցեց Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեի (CRPD) հինգերորդ նստաշրջանին և հարցերի ցանկի պատրաստմանը: Այն զեկույց ներկայացրեց, Կոմիտեին իրազեկեց, այնուհետև աշխատեց Իսպանիային ուղղված հաջորդող գործողությունների վերաբերյալ առաջարկությունների վրա: Մասնավորապես, CERMI-ն լայնածավալ քարոզարշավ մեկնարկեց հօգուտ այն մարդկանց քվեարկելու իրավունքի վերականգնման, որոնց քվեարկելու իրա-

վունքը վերացվել էր իրենց հաշմանդամության պատճառով (այդ ժամանակ նման իրավիճակում էր գտնվում 80 հազար մարդ): Կոմիտեն առաջարկեց, որ ,վերանայվեն բոլոր համապատասխան օրենքները՝ ապահովելու, որ հաշմանդամություն ունեցող բոլոր անձինք, անկախ իրենց հաշմանդամության բնույթից, իրավական կարգավիճակից կամ բնակության վայրից, ունենան քվեարկելու իրավունքե (CRPD/C/ESP/CO/1, պարբ. 48):CERMI-ն մի շարք նախաձեռնություններ մեկնարկեց ի աջակցություն օրենսդրության լրափոխման, այդ թվում հրատարակեց ուղեցույց ,Դուք ունեք քվեարկելու իրավունք, և ոչ ոք չի կարող խլել այնե վերնագրով, որը մանրամասն ներկայացնում է քվեարկելու իրավունք պահանջելու և իրացնելու գործնական քայլերը: CERMI-ի՝ շահերի առաջնմման գործունեության արդյունքում Գերագույն դատարանի դատախազը կոչ արեց տարածքային դատախազներին՝ պաշտպանել հաշմանդամություն ունեցող անձանց քվեարկելու իրավունքը: CERMI-ն նաև քարոզչական աշխատանք տարավ Կառավարության և Կոնգրեսի շրջանում՝ լրափոխելու օրենսդրությունը CRPD-ի եզրափակիչ դիտարկումներին համահունչ: Փոփոխության առաջարկն ուղարկվեց Կոնգրեսի անդամներին և Կառավարությանը:

ՔՀԴ-ները կարող են օգտագործել միջազգային հանրության ձայնը՝ աջակցելու ռազմավարություններին, որոնք ուղղված են տեղերում մարդկանց ուժերի համախմբմանը և պետական պաշտոնյաներին խրախուսելուն, որ նրանք խթանեն և պաշտպանեն քաղաքացիական հասարակության գործունեության տարածությունը:

## Ի՞նչ կարող եմ անել ես

- Տեղեկացված լինել Ձեր երկրում մարդու իրավունքների իրավիճակի վերաբերյալ ՄԱԿ-ի փաստաթղթերին.

http://www.ohchr.org/EN/Countries/Pages/HumanRightsintheWorld.aspx:

- Կապվել ՄԻԳՀԳ-ի մերձակա գրասենյակին կամ ՄԱԿ-ի տվյալ երկրի թիմին և քաղաքացիական հասարակության գործունեության տարածության հետ կապված Ձեր փորձի վերաբերյալ ձեր զեկույցը ներկայացնել ՄԻԳՀԳ-ի քաղաքացիական հասարակության բաժին. civilsociety@ohchr.org:

- Պարզել, թե ինչպես ներդրում ունենալ և մասնակցել մարդու իրավունքների պայմանագրային մարմինների աշխատանքին.

http://www.ohchr.org/Documents/Publications/NgoHandbook/ngohandbook4.pdf:

- Բողոք, անհրաժեշտության դեպքում՝ ժամանակավոր միջոցառումների կամ անհապաղ գործողությունների խնդրանքներ ներկայացնել մարդու իրավունքների վերաբերյալ՝ որևէ պայմանագրի ներքո

http://www.ohchr.org/Documents/Publications/FactSheet7Rev.2.pdf:

- Բողոք ներկայացնել Մարդու իրավունքների խորհրդի հատուկ ընթացակարգերի փորձագետներին.

http://www.ohchr.org/EN/HRBodies/SP/Pages/Communications.aspx:

- Բողոք ներկայացնել Մարդու իրավունքների խորհրդի Բողոքների դիտարկման ընթացակարգին.

http://www.ohchr.org/EN/HRBodies/HRC/ComplaintProcedure/Pages/HRCComplaintProcedureIndex.aspx:

- Մարդու իրավունքների խորհրդի նստաշրջանների ընթացում փոխանցել Ձեր տեղեկությունները և փորձը՝ կապված քաղաքացիական հասարակության գործունեության տարածության հետ.

http://www.ohchr.org/Documents/HRBodies/HRCouncil/PracticalGuideNGO_en.pdf:

- Քաղաքացիական հասարակության գործունեության տարածության հետ կապված Ձեր տեղեկություններն ու փորձը ներկայացնել Մարդու իրավունքների խորհրդի Ձեր երկրի Համընդհանուր պարբերական դիտարկման շրջանակներում.

http://www.ohchr.org/EN/HRBodies/UPR/Documents/PracticalGuideCivilSociety.pdf:

- Գլխավոր քարտուղարի՝ բռնաճնշումների վերաբերյալ տարեկան զեկույցին ներդրում կատարելու շրջանակներում մանրամասն և հաստատված տեղեկություններ տրամադրել ՄԱԿ-ի, կազմակերպության ներկայացուցիչների և մարդու իրավունքների ոլորտում դրա մեխանիզմների հետ համագործակցելու պատճառով ցանկացած անձի կամ խմբի հետապնդումների, ահաբեկման կամ ճնշամիջոցների կիրառման ենթադրյալ դեպքերի վերաբերյալ.

reprisals@ohchr.org:

- Տեղեկություններ տրամադրել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի կամ Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի թեմատիկ զեկույցների համար:
- Տեղեկություններ տրամադրել Հատուկ ընթացակարգերի թեմատիկ և տվյալ երկրի վերաբերյալ զեկույցների համար.

http://www.ohchr.org/Documents/Publications/NgoHandbook/ngohandbook6.pdf:

- Բաժանորդագրվել Քաղաքացիական հասարակության բաժնի էլեկտրոնային փոստի հասցեների ցանկին՝ կանոնավորապես տեղեկացված լինելու ՄԱԿ-ի մարդու իրավունքների մեխանիզմների գործունեության վերաբերյալ.

http://www.ohchr.org/EN/AboutUs/Pages/CivilSociety.aspx:

## Ակնկալիքների կառավարում

Պետությունների առաջնային պարտականությունն է խթանել և պաշտպանել արտահայտման, միավորումներ կազմելու, խաղաղ հավաքների ազատությունը և պետական գործերին մասնակցելու իրավունքը: ՔՀԴ-ները, ՄԱԿ-ի մարդու իրավունքների համակարգի և այլ դերակատարների հետ միասին կարող են օգնել, որ պետությունները կատարեն այս պարտավորությունները:

Քաղաքացիական հասարակության գործունեության հարցում առկա խոչընդոտների վերացման ուղղությամբ քայլեր ձեռնարկելը, նորմատիվային ակտերի կամ օրենքների տեսքով, սովորաբար երկարաժամկետ կտրվածքով են փոփոխություններ բերում, մինչդեռ այնպիսի գործողությունները, ինչպիսիք են հետապնդումները, ահաբեկումը և ճնշամիջոցների կիրառումը ՔՀԴ-ների նկատմամբ պահանջում են անհապաղ ուշադրություն: Կարևոր է օգտվել ՄԱԿ-ի համապատասխան մանդատից կամ մեխանիզմից, որը հարմար է խնդրո առարկա կոնկրետ դեպքին:

Որևէ իրավիճակում դրական արդյունքի հասնելու գործընթացի վրա ազդելու հնարավորության համար հավաքական ջանք է հարկավոր, և դրական արդյունքը սովորաբար պայմանավորված է դերակատարների լայն շրջանակի ուժերի համախմբմամբ.

տեղական հանրություն, քաղաքացիական հասարակության այլ դերակատարներ (տեղական և միջազգային), այլ երկրներ, տարածաշրջան ու միջազգային հանրություն:

ՔՀԴ-ների ներգրավվելը ՄԱԿ-ի մարդու իրավունքների համակարգում փոփոխությունների կոչող ձայները բազմապատկելու և ուժգնացնելու ուղիներից մեկն է: Դա քաղաքացիական հասարակության գործունեության տարածքի խթանման և պաշտպանության ընդհանուր արդյունավետ քարոզչական ռազմավարության տարրերից մեկն է:



# 6. Փաստաթղթերի շտեմարաններ

## Միավորված ազգերի կազմակերպության աղբյուրներ

Ինչպես աշխատել Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների ծրագրի հետ. ձեռնարկ քաղաքացիական հասարակության համար

http://www.ohchr.org/EN/AboutUs/CivilSociety/Documents/Handbook_en.pdf

Ինչպես ձեռնարկել Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների հարցով առաջարկություններին հաջորդող գործողություններ. գործնական ուղեցույց քաղաքացիական հասարակության համար

http://www.ohchr.org/Documents/AboutUs/CivilSociety/HowtoFollowUNHRRecommendations.pdf

ՄԻԳՀԳ կառավարման պլան (2014-2017), Թեմատիկ ռազմավարություն ժողովրդավարական տարածության ընդլայնման վերաբերյալ (էջ 72-83)

http://www2.ohchr.org/english/OHCHRreport2014_2017/OMP_Web_version/media/pdf/10_Democratic_space.pdf

Հռչակագիր իրավապաշտպանների մասին

http://www.ohchr.org/EN/Issues/SRHRDefenders/Pages/Declaration.aspx

Մարդու իրավունքների խորհրդի՝ քաղաքացիական հասարակության տարածության խթանման և պաշտպանության վերաբերյալ փորձագիտական քննարկման ամփոփագիր, A/HRC/27/33

Մարդու իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ 34, Հոդված 19. կարծիք ունենալու և արտահայտելու ազատություն, CCPR/C/GC/34

Միավորումներ կազմելու ազատության վերաբերյալ օրենսդրու-

թյան գնահատում, Հատուկ զեկուցողի զեկույցը իրավապաշտպանների դրության վերաբերյալ, A/64/226

Կին իրավապաշտպանների վերաբերյալ ուսումնասիրություն, Հատուկ զեկուցողի զեկույցը իրավապաշտպանների դրության վերաբերյալ, A/HRC/16/44

Իրավապաշտպանների համար անվտանգ և բարենպաստ միջավայրի տարրերը, Հատուկ զեկուցողի զեկույցը իրավապաշտպանների դրության վերաբերյալ, A/HRC/25/55

Միավորումների՝ ֆինանսական ռեսուրսներից օգտվելու հնարավորությունները, Հատուկ զեկուցողի զեկույցը խաղաղ հավաքների և միավորումներ կազմելու ազատության իրավունքների վերաբերյալ, A/HRC/23/39

Գլխավոր քարտուղարի զեկույցները մարդու իրավունքների ոլորտում Միավորված ազգերի կազմակերպության, դրա ներկայացուցիչների և մեխանիզմների հետ համագործակցության վերաբերյալ (A/HRC/27/38,A/HRC/24/29,A/HRC/21/18,A/HRC/18/19, A/HRC/14/19)

Գլուխ 16, Փոխգործունեություն և գործընկերություններ քաղաքացիական հասարակության հետ, ՄԻԳՀԳ ձեռնարկ մարդու իրավունքների մոնիթորինգի վերաբերյալ

http://www.ohchr.org/Documents/Publications/Chapter16-MHRM.pdf

## Քաղաքացիական հասարակության տրամադրած և այլ առանձին աղբյուրներ

Ազգային օրենքների սկզբունքների և տարրերի ստուգացանկ (Ոչ առևտրային իրավունքի միջազգային կենտրոն)

http://www.icnl.org/research/library/files/Transnational/checklisten.pdf

Որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական հասարակության մասնակցության եղանակների առաջավոր փորձի կանոնագիրք, Եվրոպայի խորհուրդ

http://www.coe.int/t/ngo/code_good_prac_en.asp

Բռնաճնշումների վերաբերյալ ձեռնարկ (Մարդու իրավունքների միջազգային ծառայություն)

http://www.ishr.ch/news/reprisals-handbook

Բարենպաստ միջավայրի համաթիվ, 2013 թվական (CIVICUS)

http://www.civicus.org/downloads/2013EEI%20REPORT.pdf

## 7. Հետադարձ կապ

ՄԻԳՀԳ-ի Քաղաքացիական հասարակության բաժնի հետ կարելի է կապվել հետևյալ հասցեով.

civilsociety@ohchr.org
Հեռախոս. +41(0)229179656

Քաղաքացիական հասարակության բաժնի էլեկտրոնային փոստով հաղորդագրությունների առաքման համակարգի միջոցով տրամադրվում են թարմ տվյալներ, իրականացվում է խորհրդատվություն մարդու իրավունքների ոլորտում բոլոր մանդատների և մեխանիզմների վերաբերյալ, ինչպես նաև տարածվում են դրամական միջոցների, դրամաշնորհների և կրթաթոշակների համար հայտերի ներկայացման և դիմելու վերջնաժամկետների վերաբերյալ տեղեկություններ: Բաժանորդագրվելու համար այցելեք քաղաքացիական հասարակության վեբկայք՝

http://www.ohchr.org/EN/AboutUs/Pages/CivilSociety.aspx

**Գործնական ուղեցույց քաղաքացիական հասարակության համար**

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ**

Ազգերի պալատ,
Ժնև 10, Շվեյցարիա 1211
Հեռ՝ +41 (0)22 917 90 00
Ֆաքս՝ +41 (0) 22 917 90 08
Վեբ կայք՝ www.ohchr.org

UNITED NATIONS

UNITED NATIONS
HUMAN RIGHTS
OFFICE OF THE HIGH COMMISSIONER